ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

<< 03 >> հոկտեմբեր 2019թ. N 400-Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի N 279-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33-րդ հոդվածով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով՝ հրամայում եմ.

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2019 թվականի մարտի 26-ի <<Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ծրագրերի իրականացման վարչության կանոնադրությունը հաստատելու մասին>> N 279-Լ հրամանով հաստատված հավելվածի 6-րդ կետում <<բաժնի պետ-վարչության պետի տեղակալը>> բառերը փոխարինել <<բաժնի պետ-գլխավոր հաշվապահը>> բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա.ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ